

Աշխատաշուկայի պահանջարկի  
ուսումնասիրություն. գործատու-  
երի տասարդ- ուսումնական հաստատություն  
համագործակցության  
ինստիտուցիոնալիզացման հեռանկարները

*Մոնիթինգի և հետազոտության  
արդյունքների վերլուծություն*

# Հետազոտության նպատակը, խնդիրները

1. Պարզել գործատուների պահանջները/ակնկալիքները երիտասարդներից
2. Վարկանիշային մասնագիտությունների համար խորապես ուսումնասիրել գործատու-երիտասարդ հարաբերություններում ուսումնական հաստատության և ստացած կրթության դերը
3. Պարզել գործատու-երիտասարդ հարաբերությունների ինստիտուցիոնալիզացման հնարավորությունները
4. Պարզել գործատու-հաշմանդամություն ունեցող երիտասարդ հարաբերությունների հաստատման առանձնահատկությունները

# Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ բոլոր մարզերում հետևյալ մեթոդներով.

1. Փաստաթղթերի ուսումնասիրություն
2. Տվյալների երկրորդային վերլուծություն
3. Որակական հարցազրույցներ 24 գործատուների հետ
4. Որակական հարցազրույցներ 10 փորձագետների հետ
5. 12 Ֆոկուս խմբային քննարկումներ

# Աշխատաշուկայում առաջարկ-պահանջարկի հետ կապված հիմնական խնդիրները-1

ՀՀ ԿԳՆ կողմից մասնագիտական տարբեր ուսումնական հաստատություններին տեղերի հատկացումն իրականացվել են ոչ թե տնտեսական հաշվարկի ու աշխատաշուկայում առաջարկ-պահանջարկի հարաբերակցության հիման վրա, այլ ապրիորի:

Վերջին տարիներին ԿԳՆ-ն հատկապես պետական ԲՈՒՀ-երին թույլատրել է լրացուցիչ ընդունել նախապես տրված կրթական տեղերից 20-30%-ով ավելի ուսանող:

Դրական միտում-2014թ-ի հուլիսին հաստատվել մասնագիտությունների և որակավորումների նոր ցանկ, նպատակ ունենալով կրթությունը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջներին, եթե ներկայումս մասնագիտությունների թիվը 210 է, իսկ որակավորումներինը՝ 92: Ապա 2016-2017 թ-ին դրանք կլինեն համապատասխանաբար՝ 114 և 55:

# Աշխատաշուկայում առաջարկ-պահանջարկի հետ կապված հիմնական խնդիրները-2

Ինչպես վկայում են վերջին սոցիոլոգիական հետազոտությունները գործատու-աշխատող և կրթական կազմակերպություն-աշխատաշուկա հարաբերությունները շարունակում են անարդյունավետ լինել և դրական տեղաշարժը շատ փոքր է:

Այսպես գործատուների 60.1%-ը աշխատակիցների պակասը լրացնելու համար դիմում է աշխատանքի գործակալություններ, իսկ ավելի հաճախ՝ ՋԼՄ-ներով հայտարարություն տարածելու պրակտիկային, և միայն 5%-ն է նոր աշխատակիցներ ընտրելու նպատակով դիմում մասնագիտական ուսումնական հաստատություններ,


Մասնագիտական կողմնորոշման արդյունավետ համակարգի բացակայությունը:

## Աշխատաշուկայում առաջարկ-պահանջարկի հետ կապված հիմնական խնդիրները-3

Ուսանողների 83%-ը, ըստ Հայաստանի աշխատաշուկայի հետազոտության, մասնագիտությունն ընտրում է դրա՝ ժողովրդականություն վայելելու պատճառով, ոչ թե աշխատաշուկայում առկա պահանջարկով:


Հայաստանում գործազուրկների մեջ ամենամեծ տոկոսը կազմում են մանկավարժական և առողջապահական մասնագիտություն ունեցողները՝ համապատասխանաբար 19.9% և 24.3% և դա այն դեպքում, երբ մասնագիտական կրթության ոլորտում այս մասնագիտություններով ընդգրկված ուսանողները կազմում են ամենամեծ խումբը.

# Երիտասարդների զբաղվածությունն ըստ հիմնական ոլորտների (%)



# Ներկայումս աշխատանք ունեցող երիտասարդների աշխատանքը գտնելու հարցում որոշիչ գործոնները (%)

■ Ամենաորոշիչ գործոնը ■ 2-րդ գործոնը ■ 3-րդ գործոնը






# Կրթական հաստատությունների նկատմամբ առաջադրվող պահանջները

Գործատուների պահանջները	Երիտասարդների պահանջները
1. Պրակտիկ կիրառական գիտելիքների տրամադրում	
2. Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան տրամադրվող գիտելիքների և հմտությունների թարմացում ուսումնառության ընթացքում	
3. ԲՈՒՀ-երին կից կադրային կենտրոնների արդյունավետ գործառնություն	
4. Համագործակցություն գործատուների հետ ուսումնական պրոցեսի ընթացքում	4. Ուսման ընթացքում գործատուների հետ շփման և աշխատանքային պայմանագրեր կնքելու հնարավորություն
5. Ուսման ընթացքում/ավարտին պարտադիր երկարաժամկետ պայմանագրերի կնքում կադրերի հոսունությունը կանխելու նպատակով	

# Աշխատաշուկայում հաշմանդամություն ունեցող երիտասարդների ներգրավման հիմնական խոչընդոտները

## Ըստ երիտասարդ հաշմանդամների



## Ըստ գործատուների

1. Հոգեբանական ճնշումը
2. Աշխատանքային մթնոլորտը
3. Նյութատեխնիկական պայմանների առկայությունը
4. Տիզիկական և մտավոր կարողությունների անհամապատասխանությունը աշխատանքին
5. Աշխատանքային փորձը

6. Եզրակացություններ.  
մասնագիտական  
կրթության և  
աշխատաշուկայի միջև  
առկա հիմնախնդիրները

# Եզրակացություն 1

ՀՀ-ում մասնագիտական կրթության համակարգի և աշխատաշուկայի շահերի վեկտորները տարբեր ուղղություններ ունեն: Չնայած պետության կողմից ձեռնարկված միջոցառումներին էական տարբերություն է նկատվում կրթական համակարգի առաջարկի և աշխատաշուկայի պահանջարկի միջև:

Մասնագիտական կրթության համակարգը հիմնականում ուղղորդված է սեփական ծառայությունների առաջնային (ներքին) սպառողը՝ ուսանողներին և ոչ թե երկրորդային (արտաքին սպառողը) գործատուն:

## Եզրակացություն 2

Մասնագիտական կրթության համակարգը իր աճի տեմպերով հետ է մնում աշխատաշուկայի պահանջներից: Երբ կրթական հաստատությունները կողմնորոշված են միայն դեպի մասնագիտությունների առկա շրջանակը, ապա որոշ մասնագիտացումների համար աշխատաշուկայում առաջանում է աշխատուժի ավելցուկ, իսկ մյուս մասնագիտությունների համար զգալի պակասորդ է նկատվում:

Անհրաժեշտ է մշտապես թարմացնել տեղեկատվությունը աշխատաշուկայի իրական պահանջարկի վերաբերյալ և իրականացնել համապատասխան փոփոխություններ կրթական համակարգում:

## Եզրակացություն 3

ՀՀ-ում արդյունավետ չի գործում մասնագիտական կողմնորոշման համակարգը: Արդյունքում երիտասարդները սկսած դպրոցական տարիքից առաջնորդվում են հասարակության մեջ ձևավորված կարծրատիպերով (ընտրելով ԲՈՒՀ-ական կրթությունը և այսպես կոչված հեղինակավոր մասնագիտությունները), փոխարենը դուրս են մնում իրականում պահանջված մասնագիտությունները:

## Եզրակացություն 4

ՀՀ-ում բարձրագույն կրթական համակարգը հիմնականում ակադեմիական/ տեսական, քան պրակտիկ կողմնորոշում ունի: Ինչը լուրջ խնդիրներ է առաջացնում աշխատաշուկայում երիտասարդ կադրերի ներգրավման հետ կապված:

Ուսումնառության ընթացքում ունեցած պրակտիկական հիմնականում ձևական բնույթ է կրում:  
Երիտասարդները չեն ստանում, կիրառական և հետազոտական անհրաժեշտ հմտություններ:

## Եզրակացություն 5

Մանկավարժական կադրերի որակավորումը և կրթական ծրագրերի անհամապատասխանությունը աշխատաշուկայում առկա պահանջներին: Կրթական գործընթացում նորամուծությունները քիչ տեղ են զբաղեցնում:

Դասավանդող կադրերի ցածր աշխատավարձը և մոտիվացիայի պակասը: Որակյալ դասախոսները նախընտրում են իրենց դասավանդման պրակտիկան փոխարինել առավել բարձր վարձատրվող աշխատանքով:



## Եզրակացություն 6

Աշխատաշուկայի պահանջների իրական կանխատեսումների բացակայությունը: Մասնագիտական կրթական համակարգը չի կարողանում արդյունավետ արձագանքել արտաքին պատվերին և կրթական գործընթացի համապատասխան պլանավորում իրականացնել:

Ներկայումս կրթության որակի վերահսկողությունը իրականացվում է հենց կրթական համակարգի ներսում: Սակայն առավել արդյունավետ կլիներ, եթե գործատուն ոչ միայն հանդես գար որպես պատվիրատու, այլև որպես կրթական գործընթացի վերահսկող և գնահատող:

## Եզրակացություն 7

Կադրերի պատրաստման և վերապատրաստման անհրաժեշտ ռեսուրսների սակավությունը (թանկարժեք տեխնոլոգիաների ներմուծում, նյութատեխնիկական թարմացված բազա) լրացուցիչ խնդիրներ են ստեղծում կրթական համակարգի համար:

Ակնհայտ է, որ միայն բյուջետային ռեսուրսները բավարար չեն պահանջվող կրթական ենթակառուցվածքերի ապահովման համար:  
Անհրաժեշտ է ներգրավել նաև գործատուներին:

## Եզրակացություն 8

Մասնագիտական կրթության և աշխատաշուկայի համագործակցության արդյունավետ մոդելներ կարող են լինել.

- Ճյուղային պատվերները ըստ ոլորտների/ կոնկրետ գործատուի
- Պրակտիկայի, դիպլոմայինների և կուրսաախնների կազմակերպումը իրական գործատուի կողմից, կամ մասնակցությամբ
- Ինտեգրացված կրթական-արտադրական ծրագրերի մշակումը

Շնորհակալություն

[www.ystudies.am](http://www.ystudies.am)

